ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ ՏԱՍԸ ՏԱՐԻՆ

1967 թ. ստեղծվեց «Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա հանդեսը, որ կոչված էր նպաստելու հասարակական գիտությունների և մասնավորապես հայագիտության բնագավառում ծավալվող հետազոտություններին։

«Բանբերը» եկավ փոխարինելու Երևանի պետական համալսարանում դեռևս 1925 թ. հրատարակվող գիտական աշխատությունների ժողովածուներին։ Ի տարբերություն իր նախորդների, հանդեսը կայուն պարբերականություն ունի, հրատարակվում է առավել ճոխ ու բովանդակալից ծրագրով։

Նոր հանդեսը առաջին իսկ համարից լավ ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում, արժանացավ ինչպես մեր հանրապետության, այնպես էլ սփյուռքահայ մամուլի գնահատությանը։ Հրապարակի վրա են «Բանբերի» երեսուն համարները, ուր հասարակագիտական ամենատարբեր հարցերի քննարկման հետ կարելի է գտնել երկրի հասարակական-քաղաքական կյանքի հրատապ խնդիրների արձագանքը։ Հոդվածների, բանավեճի ու քննարկման, հաղորդումների ու հրապարակումների, գիտական լրատուի ու գրքերի տեսության բաժիններում զետեղված նյութերը արտացոլում են գիտության ասպարեզում կատարված առաջընթացը, հատկապես համալսարանի գիտնականների ձեռք բերած նվաճումները, համալսարանի, հաճախ նաև հանրապետության գիտական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, վերլուծում ու գնահատում են գիտական նոր հրատարակությունները. հանդեսում հատուկ ուշադրություն է նվիրվում արտասահմանում լույս տեսնող հայագիտական ու արևելագիտական ուսումնասիրություններին։

«Բանբերի» անդրանիկ համարում տպագրված խմբագրականի մեջ ասված էր. «Նոր պարբերականի կարևորագույն խնդիրն է՝ ամեն կերպ նպաստել հասարակական գիտությունների զարգացմանը, մասնավորապես հայագիտության հրատապ հարցերի մարքսիստական-լենինյան ուսումնասիրությանը» (էջ 4)։ Հանդեսն իրոք գիտությունների լայն շրջանակ է ընդգրկում. նրա էջերը տրամադրվում են պատմության և բանասիրության, արվեստի և փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավարանության բնագավառներում կատարվող հետազոտություններին։ Հասկանալի է, որ այսպիսի լայն շրջանակները ենթադրում են նաև թեմատիկ լայն ընդգրկում ու բազմազանություն։ Հայ ժողովրդի նախասովետական և արդի պատմության ու մշակույթի խնդիրների կողքին ուշադրության կենտրոնում են եղել հայկական գաղթօջախների պատմությունը, հարևան ու հեռավոր ժողովուրդների հետ հայ ժողովրդի բարեկամությունն ու մշակութային կապերը, պատշաճ տեղ են գտել նաև արվեստի պատմության ու տեսության, Հայաստանի տնտեսական պատմության, իրավունքի, ազգագրության, պատմական աշխարհագրության, հայ ժողովրդի ազատագրական պայքարի, նրա սոցիալական ու ազգային վերածննդի, Հայրենական մեծ պատերազմում նրա մասնակցության այլևայլ հարցերը։ Զգալի հետաքրքրություն ունեն Հայաստանում բնական գիտությունների զարգացման պատմությունը լուսաբանող հոդվածներն ու հաղորդումները։

Հանդեսի ուշադրության կենտրոնում են եղել հատկապես հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի պրոբլեմները։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Գալոյանի «Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստների զավթողական պլանների ձախողումը Անդրկովկասում», պրոֆ. Հ. Թումանյանի «Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը», Հ. Հակոբյանի «ՍՍՀՄ տնտեսական քաղաքականության և նրա մի քանի բուրժուական մեկնաբանությունների մասին», Ռ. Ամիրբեկյանի «Աշխատաժամանակի օգտագործումը բարելավելու շուրջը», Հ. Հովակիմյանի «Նյութական շահագրգռվածության հարցի շուրջը», պրոֆ. Հ. Ֆելեքյանի «Սովետահայ պարբերական մամուլի պատմությունից» և շատ այլ հոդվածներում քննարկված ու լուսաբանված են երկրի ժողովրդական տնտեսության, սովետական շինարարության վերաբերյալ ամենարազմազան տեսական ու գործնական խնդիրներ։ Տասնյակ հոդվածներ, հաղորդումներ ու հրապարակումներ լայն արձագանք են գտել ընթերցողների շրջանում, հաճախ էլ՝ արտատպվել մեր հանրապետության և սփյուռքի մամուլում։

Իր տասնամյա գոյության ընթացքում հան-

դեսը արձագանքել է երկրի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի կարևոր իրադարձություններին, անդրադարձել Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյա տարելիցներին, պատշաճ ձևով նշել է հայ մշակույթի մեծ երախտավորներ Եղիշե Չարենցի, Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Ավետիք Իսահակյանի, Գաբրիել Սունդուկյանի հոբելյանները։

Համալսարանի «Բանբերը» մեծ հեղինակություն ձեռք բերեց հանրապետության գիտական հասարակայնության շրջանում։ Գնալով ավելի ու ավելի ստվարացավ նրան աշխատակցող գիտնականների բանակը։ Նրա հեղինակների թվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Միության և արտասահմանյան շատ անվանի գիտնականներ։ Հանդեսի գիտական հեղինակության բարձրացմանը նպաստել է ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամներ՝ Աշ. Հովհաննիսյանի («Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը», «Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը»), Մ. Ներսիսյանի («Հայ առաջին ուտոպիստ-սոցիալիստը»), Լ. Խաչիկյանի («Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի», «Էջեր համշենահայ պատմությունից»), Ա. Ղանալանյանի («Ժողովրդական ավանդությունների ժանրային առանձնահատկությունների մասին»), Գ. Ջահուկյանի («Հայերենը և Բրակերենը», «Հայերենի բառապաշարի խեթա-լուվական տարրերը») և այլ անվանի գիտնականների աշխատակցությունը։ Տեսական հոդվածներով այստեղ հանդես են եկել՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Վ. Ասմուսը («Ազատության և անհրաժեշտության դիալեկտիկան Հեգելի նախորդների հայացքներում»), Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Պոլիկարովը («Գիտությունների դասակարգման հարցի շուրջը»), փիլիսոփայության դոկտոր Ս. Սարգսյանը Բուլղարիայից («Գիտության հասկացությունների ստույգ տարբերակման և կիրառման մասին», «Հատկության հատկությունները» պրոբլեմի վերլուծությունը»)։ Պատմության մշակույթի ամենաբազմաղան հարցեր են քննարկել իրենց հոդվածներում Հ. Ռ. Սիրունին (Ռումինիա), Գ. Հայրապետյանը (Բուլղարիա), Յան Պլեան (Չեխոսլովակիա) և շատ ուրիշներ։ Ռուս, ուկրաինացի, մոլդավացի գիտնականները «Բանբերի» էջերում տպագրել են ժողովուրդների գրական-մշակութային առնչությունների վերաբերյալ հետաքրքրական նյութեր։ Դրանցից հիշելի են ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Պ. Իերկովի (Լենինգրադ) «Ազգային մշակույթի պրոբլեմը Վ. Բրյուսովի հայացքներում և ստեղծագործության մեջ», Գր. Կոչուրի (Կիև) «Վ. Բրյուսովի «Հայերին» բանաստեղծության ուկրաիներեն թարգմանությունը», Ս. Սեմչենկոյի (Կիև) «Բ. Պ. Խաշդեուի «Հայերը» բանաստեղծությունը», Ի. Պոստուպալսկու (Մոսկվա) «Սայաթ-Նովայի առաջին ռուսերեն չափածո թարգմանության մասին», Տ. Սիսի (Կամենեց-Պոդոլսկ) «Հայերը ուկրաինական բանահյուսության մեջ», Ա. Կաժդանի (Մոսկվա) «1037 թ. էսֆիգմենոսյան հրամանագիրը և Թեոկտիստոսի գործունեությունը», Ա. Կակովկինի (Լենինգրադ) «1293 թ. Սկևռայի եռանկարը. պատվիրատուի մտահղացումը և նրա մարմնավորումը» և այլ հոդվածներ ու հաղորդումներ։

Հարուստ է եղել նաև հանդեսի հրապարակումների բաժինը։ Այս կարգի նյութերի թուցիկ թվարկումն իսկ մոտավոր պատկերացում կտա այն մասին, թե ինչ ժառանգություն է բերում գիտական շրջանառության մեջ «Բանբերը»։ Ընթերցողները հետաքրքրությամբ են ընդունել, օրինակ, «Եղիշե Չարենցի անտիպ բանաստեղծությունները Վահան Տերյանի մասին», «Թումանյանը և հայկական համալսարանը», «Հայերեն նորահայտ վավերագրեր բալկանյան ժողովուրդների 1821 թ. ազգային-ազատագրական շարժումների մասին», «Իբն ալ-Ֆակիհի «Ախբար ալ-Բուլդանի» անհայտ գլուխը աս-Սավադի մասին» հրապարակումները, Պետրոս Դուրյանի գործունեությանը վերաբերող նամակները, Կ. Ֆլամարիոնի ու Ռ. Որբերյանի, Գ. Հովսեփյանի ու Ն. Մառի, Ա. Բելիի և Մ. Սարյանի, Մուրացանի, Նորայր Բյուզանդացու, Թեոդիկի, Վահան Տերյանի նամակները, Հովհ. Թումանյանի, Դ. Վարուժանի անտիպ ստեղծագործությունները, նորահայտ նյութեր, վավերագրեր։

Տասը տարվա բեղմնավոր աշխատանքով «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը իր լուման է ներդրել հանրապետությունում հասարակական գիտությունների և առաջին հերթին հայագիտության զարգացման գործում։ Այդ շնորհակալ աշխատանքին սատար ու հետամուտ են եղել համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ռ. Ներսիսյանը, որը զգալի դեր խաղաց հանդեսի հիմնադրման գործում, և «Բանբերի» խմբագրական խորհուրդը՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Էդ. Ջրբաշյանի գլխավորությամբ։

Երևանի պետական համալսարանի «Բանբերը» թևակոխել է իր գոյության երկրորդ տասնամյակը։ Ցանկանք, որ այսուհետև ավելի արդյունավետ լինի նրա աշխատանքը։

Ա. ՄԱԴՈՅԱՆ